ԱՐԴ/0444/01/26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7 սեպտեմբերի 2026 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ

մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԱՐԴ/0444/01/26 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2026 թվականի սեպտեմբերի 3-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2026 թվականի հուլիսի 27-ին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Գարեգին Բ Ներսիսյանի (Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց), Նաթան Սամուել Օհանիսյանի (Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյան), Հայկազուն-Վրեժ Անդրանիկի Նաջարյանի (Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյան), Վահան Սարգիսի Հովհաննէսեանի (Վահան եպիսկոպոս Հովհաննիսյան), Արթուր Սամսոնի Հակոբյանի (Հովնան եպիսկոպոս Հակոբյան), Էդգար Գրիգորի Հակոբյանի (Մակար եպիսկոպոս Հակոբյան) և Նելսոն Ռազմիկի Բաբայանի (Մուշեղ եպիսկոպոս Բաբայան) վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ 69105626 (ԱՐԴ/0444/01/26) քրեական վարույթը:

1.1. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Հ.Մանուկյան) 2026 թվականի հուլիսի 30-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0444/01/26 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հ.Մանուկյանը 2026 թվականի օգոստոսի 7-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0444/01/26 քրեական գործով ինքնաբացարկ հայտնելու մասին:

1.2. 2026 թվականի օգոստոսի 10-ին քրեական վարույթը վերաբաշխվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ս.Ռուշանյանին:

Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի օգոստոսի 14-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0444/01/26 քրեական գործի վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.3. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի օգոստոսի 28-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0444/01/26 քրեական

վարույթն ըստ տարածքային ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր՝ Վ.Մելիքյան) 2026 թվականի սեպտեմբերի 3-ին որոշում է կայացրել թիվ ԱՐԴ/0444/01/26 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի սեպտեմբերի 3-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. Գարեգին Բ Ներսիսյանի (Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց) նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածի 2-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ նա *«(…) հանդիսանալով նաև «Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցի» կրոնական կազմակերպության Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահ, իր ծառայողական լիազորություններն օգտագործելով, խոչընդոտել է օրինական ուժի մեջ մտած դատական այլ ակտի՝ «Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու» վերաբերյալ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշման կատարմանը:*

Այսպես.

*2026 թվականի հունվարի 15-ին ********** ********* ********-ը (**.****** ******** **********, այսուհետ նաև Հայցվոր) հայցադիմում է ներկայացրել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ նաև Դատարան)՝ խնդրելով ճանաչել անվավեր՝ իրեն Մասյացուրնի թեմի առաջնորդի պաշտոնից ազատելու մասին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի՝ 2026 թվականի հունվարի 10-ի թիվ 02 հայրապետական տնօրինությունը՝ որպես հետևանք հայցվորին վերականգնելով Մասյացուրնի թեմի առաջնորդի պաշտոնում:*

Նշված հայցադիմումի հետ միաժամանակ, հայցվորը ներկայացրել է հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդություն՝ խնդրելով Դատարանին՝ կիրառել այնպիսի հայցի ապահովումներ, որոնք կապահովեն հայցվորի հոգևոր ծառայությունն այն պաշտոնի շրջանակներում, որից զբաղեցնելու իրավունքը վիճարկվում է դատարանում:

*Վերոգրյալ հայցադիմումի հիման վրա 2026 թվականի հունվարի 16-ին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացվել է թիվ ***/****/**/** քաղաքացիական գործը վարույթ ընդունելու մասին որոշում: Միաժամանակ նույն օրը Դատարանի կողմից որոշում է կայացվել Հայցվորի միջնորդությունը բավարարելու մասին՝ պարտավորեցնելով պատասխանող «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի» կրոնական կազմակերպությանը և այլ անձանց, առանց խոչընդոտի ապահովելու ******* ******** **********-ի (**. ****** ******* *********-ի) պաշտոնավարումը Մասյացոտնի թեմի առաջնորդի պաշտոնում՝ մինչև գործով եզրափակիչ դատական ակտ կայացնելը, ինչպես նաև՝ արգելելով պատասխանող «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի» կրոնական կազմակերպությանը և այլ անձանց իրականացնել որևէ գործողություն, որը կարող է որևէ կերպ խոչընդոտել ******* ******** **********-ին (**. ******** ********* *********-ին), որպես Մասյացոտնի թեմի առաջնորդ, իրականացնելու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կանոնադրության 68-րդ հոդվածով, կիրառելի այլ կանոններով թեմի առաջնորդի համար սահմանված իրավասություններն ու պարտականություններն այդ թվում նաև՝ Մասյացոտնի թեմի ֆինանսական հաշիվների (միջոցների) տնօրինումը և թեմի ֆինանսական գործարքների իրականացումը՝ մինչև գործով եզրափակիչ դատական ակտ կայացնելը:*

*Նշված որոշման հիման վրա Դատարանի կողմից տրամադրվել է թիվ ԿԹ-**********_***** կատարողական թերթը, որի հիման վրա ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության Էջմիածնի տարածաշրջանի բաժանմունքի ավագ հարկադիր կատարող **.********-ի կողմից 2026 թվականի հունվարի 16-ին կայացվել է թիվ ********** կատարողական վարույթ հարուցելու և Պարտապանին*

*որոշակի գործողություններ կատարելուն հարկադրելու, որոշակի գործողությունների կատարումն արգելելու մասին որոշում: Հիշյալ որոշումն ու Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) կողմից թիվ ***/****/**/** քաղաքացիական գործի շրջանակներում 2026 թվականի հունվարի 16-ին կայացված որոշումն ու տրված թիվ ԿԹ-******-**** կատարողական թերթի օրինակները 2026 թվականի հունվարի 19-ին Հարկադիր կատարողի կողմից առձեռն տրամադրվել են «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի» կրոնական կազմակերպությանը՝ Մայր Աթոռին՝ ի դեմս Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի փնօրեն, դիվանապետի պաշտոնակատար Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանին:*

*Վերոգրյալի պայմաններում, Գերագույն Հոգևոր Խորհուրդը, անդրադառնձ կատարելով **. ******* ******* **********-ի կարգազանց ընթացքին և հրապարակային ելույթներում ու հայտարարություններում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, իր ծառայակից եկեղեցականների և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հասցեին հնչեցրած զրպարտիչ մեղադրանքներին, խստորեն դատապարտելով նման վարքագիծը այն գնահատելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ հաղորդակցության խզմամբ, կանոնական շեղումներով ու կարգազանց գործողություններով ուղեկցվող հնազանդության ուխտի դրժում միաձայն քվեարկությամբ որոշել է առաջարկել Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ **. ******* ******** ********** **********-ին հոչակել կարգալույծ: Նշված առաջարկի հիման վրա՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն, իր ծառայողական լիազորություններն օգտագործելով, կարգալույծ է հոչակել ******** ******* ********-ին (**. ******* ******** **********)՝ այդ կերպ խոչընդոտելով Դատարանի կողմից թիվ ***/****/**/** քաղաքացիական գործի շրջանակներում 2026 թվականի հունվարի 16-ին կայացված դատական այլ ակտի՝ «Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու վերաբերյալ» որոշման և դատարանի կողմից տրված թիվ ԿԹ-******-***** կատարողական թերթի ու դրա հիման վրա ՀՀ*

հարկադիր կատարողի կողմից կայացված որոշումների պահանջների կատարմանը: (…)»[1]:

4.1. Նաթան Սամուել Օհանիսյանի (Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի) նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածի 2-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ նա *«(…) հանդիսանալով «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի» կրոնական կազմակերպության Գերագույն հոգևոր խորհրդի կազմում ընդգրկված բարձրաստիճան հոգևորական՝ արքեպիսկոպոս, ինչպես նաև Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների արարողակարգի բաժնի պետն, իր ծառայողական լիազորություններն օգտագործելով, խոչընդոտել է օրինական ուժի մեջ մտած դատական այլ ակտի՝ «Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու» վերաբերյալ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշման կատարմանը:*

Այսպես.

*2026 թվականի հունվարի 15-ին ******** ******** ********-ը (**. ******* ********** **************, այսուհետ նաև Հայցվոր) հայցադիմում է ներկայացրել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ նաև Դատարան)՝ խնդրելով ճանաչել անվավեր՝ իրեն Մասյացոտնի թեմի առաջնորդի պաշտոնից ազատելու մասին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի՝ 2026 թվականի հունվարի 10-ի թիվ 02 հայրապետական տնօրինությունը՝ որպես հետևանք հայցվորին վերականգնելով Մասյացոտնի թեմի առաջնորդի պաշտոնում:*

Նշված հայցադիմումի հետ միաժամանակ, հայցվորը ներկայացրել է հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդություն՝ խնդրելով Դատարանին կիրառել այնպիսի հայցի ապահովումներ, որոնք կապահովեն հայցվորի հոգևոր ծառայությունն այն պաշտոնի շրջանակներում, որից զբաղեցնելու իրավունքը վիճարկվում է դատարանում:

Վերոգրյալ հայցադիմումի հիման վրա 2026 թվականի հունվարի 16-ին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 15-17:

*կայացվել է թիվ ***/****/**/** քաղաքացիական գործը վարույթ ընդունելու մասին որոշում: Միաժամանակ նույն օրը Դատարանի կողմից որոշում է կայացվել Հայցվորի միջնորդությունը բավարարելու մասին՝ պարտավորեցնելով պատասխանող «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի» կրոնական կազմակերպությանը և այլ անձանց, առանց խոչընդոտի ապահովելու ******* ******** **********-ի (**. ******** ******** **********-ի) պաշտոնավարումը Մասյացոտնի թեմի առաջնորդի պաշտոնում՝ մինչև գործով եզրափակիչ դատական ակտ կայացնելը, ինչպես նաև՝ արգելելով պատասխանող «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի» կրոնական կազմակերպությանը և այլ անձանց իրականացնել որևէ գործողություն, որը կարող է որևէ կերպ խոչընդոտել ******* ********* **********-ին (**. ******** ******* **********-ին), որպես Մասյացոտնի թեմի առաջնորդ, իրականացնելու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կանոնադրության 68-րդ հոդվածով, կիրառելի այլ կանոններով թեմի առաջնորդի համար սահմանված իրավասություններն ու պարտականություններն այդ թվում նաև՝ Մասյացոտնի թեմի ֆինանսական հաշիվների (միջոցների) տնօրինումը և թեմի ֆինանսական գործարքների իրականացումը՝ մինչև գործով եզրափակիչ դատական ակտ կայացնելը:*

*Նշված որոշման հիման վրա Դատարանի կողմից տրամադրվել է թիվ ԿԹ-*******-**** կատարողական թերթը, որի հիման վրա ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության Էջմիածնի տարածաշրջանի բաժանմունքի ավագ հարկադիր կատարող **.**********-ի կողմից 2026 թվականի հունվարի 16-ին կայացվել է թիվ ********** կատարողական վարույթ հարուցելու և Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն հարկադրելու և որոշակի գործողությունների կատարումն արգելելու մասին որոշում: Հիշյալ որոշումն ու Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) կողմից թիվ ***/****/**/** քաղաքացիական գործի շրջանակներում 2026 թվականի հունվարի 16-ին կայացված որոշումն ու տրված թիվ ԿԹ-**********-***** կատարողական թերթի օրինակները 2026 թվականի հունվարի 19-ին Հարկադիր կատարողի կողմից առձեռն տրամադրվել են «Հայաստանյայց*

Առաքելական Սուրբ Եկեղեցի» կրոնական կազմակերպությանը՝ Մայր Աթոռին՝ ի դեմս Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի փնօրեն, դիվանապետի պաշտոնակատար Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանին:

*Վերոգրյալի պայմաններում, «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի» կրոնական կազմակերպության Գերագույն Հոգևոր Խորհրդի (այսուհետ նաև Գերագույն Հոգևոր Խորհուրդ) անդամ Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը (Նաթան Սամուել Օհանիսյանը) Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ հանդիսացող այլ անձանց հետ, Մայր Աթոռում 2026 թվականի հունվարի 27-ին տեղի ունեցած Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստի ընթացքում, իրենց ծառայողական լիազորություններն օգտագործելով, կարգալույծ են հռչակել ******** ********** **********-ին (**. ******* ********* **********)՝ այդ կերպ խոչընդոտելով Դատարանի կողմից թիվ ***/****/**/** քաղաքացիական գործի շրջանակներում 2026 թվականի հունվարի 16-ին կայացված դատական այլ ակտի՝ «Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու վերաբերյալ» որոշման և դատարանի կողմից տրված թիվ ԿԹ-*******-**** կատարողական թերթի ու դրա հիման վրա ՀՀ հարկադիր կատարողի կողմից կայացված որոշումների պահանջների կատարմանը: (…)»*[2]:

4.2. 2026 թվականի հունվարի 30-ի որոշումներով նույնաբովանդակ ենթադրյալ արարքների համար քրեական հետապնդում է հարուցվել նաև Հայկազուն-Վրեժ Անդրանիկի Նաջարյանի (Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանի), Վահան Սարգիսի Հովհաննէսեանի (Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանի), Արթուր Սամսոնի Հակոբյանի (Հովնան եպիսկոպոս Հակոբյանի), Էդգար Գրիգորի Հակոբյանի (Մակար եպիսկոպոս Հակոբյանի) և Նելսոն Ռազմիկի Բաբայանի (Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի) նկատմամբ[3]:

5. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2026 թվականի օգոստոսի 28-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…)*

---

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 200-202:
[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1, թերթեր 212-214, 215-217, 203-205, 206-208, 209-211:

Դատարանը նախ արձանագրում է, որ Գարեգին Բ Ներսիսյանին (Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց) մեղսագրվող արարքի փաստական նկարագրությունը վերագրվող արարքի կատարման ենթադրյալ վայրի վերաբերյալ չի պարունակում որևէ տվյալ:

Դատարանը հարկ է համարում ընդգծել, որ քննիչը և հսկող դատախազը, ունենալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 189-րդ հոդվածի 4-րդ մասով իրենց վրա դրված պոզիտիվ պարտականություն, անձին վերագրվող փաստական հանգամանքներում չեն նշել վերագրվող ենթադրյալ արարքի կատարման վայրը, որի միակ իրավական բացատրությունը կարող է լինել մեղսագրվող ենթադրյալ արարքի կատարման վայրի հայտնի կամ ապացուցված չլինելը: Դատարանը փաստում է, որ այն դեպքերում, երբ մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել ենթադրյալ հանցանքի կատարման վայրը, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում գտնվում է մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

Ինչ վերաբերում է հանրային մեղադրողի այն հայտարարությանը, որ տեխնիկական վրիպակի արդյունքում չի նշվել ենթադրյալ հանցանքի կատարման վայրը, Դատարանն արձանագրում է, որ վրիպակի ուղղման վերաբերյալ քրեադատավարական կառուցակարգեր ներդրված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 283-րդ հոդված), որոնք չեն նախատեսում մեղադրանքում վրիպակի ուղղման հնարավորություն, ավելին՝ նման հնարավորության նախատեսումն անհամատեղելի կլիներ մեղադրանքի քրեադատավարական էության, ինչպես նաև հավասարության և մրցակցության սկզբունքների հետ, ինչից ելնելով օրենսդիր մարմինը թույլատրել է վրիպակի ուղղում կատարել միայն մեղադրանքի փոփոխման եղանակով (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 276-րդ հոդված), հետևաբար՝ Դատարանը ընդդատության հարցի կապակցությամբ եզրահանգման հանգելիս չի կարող հիմքում դնել հանրային մեղադրողի հայտարարությունը:

*Դատարանը, անդրադառնալով պաշտպանական կողմի այն հայտարարությանը, որ իրենք չեն վիճարկում այն հանգամանքը, որ Գարեգին Բ Ներսիսյանը (Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց) ******* ********* **********-ին կարգալույծ հռչակելու վերաբերյալ թիվ 77 Հայրապետական Տնօրինությունն արձակել է քաղաք Վաղարշապատում, հարկ է համարում փաստել, որ Դատարանի կողմից վերը վկայակոչված՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի որոշումներով արձանագրվել է, որ բանավոր հայտնած տեղեկատվությունը բավարար չէ հիմնավորելու, որ վարույթն ընդդատյա է որևէ դատարանին:*

Ինչ վերաբերում է հանրային մեղադրողի այն պնդմանը, որ հանրահայտ փաստի առկայությամբ պայմանավորված չի նշվել, թե վերագրվող ենթադրյալ արարքը որտեղ է կատարվել, Դատարանը հարկ է համարում փաստել, որ նույնիսկ այդպիսի հիմնավորման ընդունման դեպքում, քրեական հետապնդման մարմիններն ազատված չեն մեղսագրվող արարքում նշելու ենթադրյալ արարքի կատարման վայրը, և Դատարանը այս փուլում իրավասու չէ գնահատելու արդյոք որևէ փաստի հաստատման կամ հերքման համար առկա է հանրահայտ փաստ, թե ոչ:

Այնուամենայնիվ, եթե Դատարանը ընդունի, որ հանրահայտ փաստ է, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսության նստավայրը գտնվում է քաղաք Վաղարշապատում, միևնույն է ընդունելի չէ այն պնդումը, որ հանրահայտ փաստ է, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը իր բոլոր տնօրինություններն արձակում է քաղաք Վաղարշապատում:

Ամփոփելով վերոգրյալը Դատարանը գտնում է, որ ընդդատության հարցի լուծման համար կիրառելի է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կանոնը, ըստ որի՝ եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել ենթադրյալ հանցանքի կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում գտնվում է մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

Սույն քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ թիվ ԱՐԴ/0444/01/26 քրեական գործով մինչդատական վարույթն իրականացվել է ՀՀ

քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչությունում, որի նպատակն է գտնվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում:

Վերը նշվածի լույսի ներքո Դատարանը գտնում է, որ թիվ ԱՐԴ/0444/01/26 քրեական գործն, ըստ տարածքային ընդդատության, պետք է փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: (...)»[4]*:*

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) Դատարանն արձանագրում է, որ միայն մեղսագրվող արարքի փաստական նկարագրության մեջ ենթադրյալ հանցանքի կատարման վայրը նշված չլինելը, ամեն դեպքում չէ, որ ներկա հաստատում է ենթադրյալ արարքի կատարման վայրը պարզված չլինելու հանգամանքը:*

*Սույն դեպքում հաշվի առնելով քրեական գործի առանձնահատկությունները և մեղսագրվող ենթադրյալ արարքի փաստական նկարագրությունը, Դատարանը գտնում է, որ թեև Գարեգին Բ Ներսիսյանին մեղսագրվող արարքի փաստական նկարագրության մեջ հստակ նշված չէ ենթադրյալ արարքի կատարման վայրը, այնուամենայնիվ նույն քրեական գործի շրջանակներում Նաթան Սամուել Օհանիսյանի, Հայկազուն-Վրեժ Անդրանիկի Նաջարյանի, Վահան Սարգսի Հովհաննէսեանի, Էդգար Գրիգորի Հակոբյանի, Նելսոն Ռազմիկի Բաբայանի և Արթուր Սամսոնի Հակոբյանի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդման որոշումների մեջ հստակ ձևակերպված է, որ «...Մայր Աթոռում 2026 թվականի հունվարի 27-ին տեղի ունեցած Գերագույն հոգևոր խորհրդի նիստի ընթացքում, իրենց ծառայողական լիազորություններն օգտագործելով կարգալույծ են հռչակել ******** ********* *********-ին /** .******* ******* *********/...»:*

Միևնույն ժամանակ Դատարանը գտնում է, որ թեև միայն հանրահայտ փաստի առկայությունը վճռորոշ դեր ունենալ չի կարող տարածքային ընդդատությունը որոշելու համար, սակայն մյուս փաստական հանգամանքների համադրումն

[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 9, թերթեր 49-54:

այդպիսի փաստի առկայության հետ, կարող է որոշիչ դեր ունենալ տարածքային ընդդատության հարցի պարզման համար:

Դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներով արձանագրվել է, որ միայն բանավոր հայտարարությունը չի կարող բավարար լինել տարածքային ընդդատության հարցը պազելու համար, որոնք վկայակոչվել են Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշման մեջ, սակայն դրանք առավելապես վերաբերում են մեղադրյալի կողմից արված հայտարարությանը և այն դեպքերին, երբ բացի բանավոր հայտարարությունից այլ փաստական տվյալներ առկա չեն, իսկ սույն դեպքում բացի բանավոր հայտարարությունից առկա են նաև այլ փաստական տվյալներ՝ որոնք վկայում են տարածքային ընդդատության կանոնի պահպանված լինելու մասին, ինչպես նաև դրա վերաբերյալ համակարծիք են եղել ինչպես մեղադրանքի, այնպես էլ պաշտպանության կողմը:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ թիվ ԱՐԴ/0444/01/26 քրեական վարույթը պետք է ուղարկել Վճռաբեկ դատարանի քրեական պալատ՝ վարույթի տարածքային ընդդատության հարցը վերջնականապես լուծելու համար: (…)»[5]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. իրավաչափ է արդյո՞ք Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԱՐԴ/0444/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

[5] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 10, թերթեր 3-7:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»*:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[6]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[7]:

10. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[8]:

11. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի՝ օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս

---

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[7] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

[8] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը քննել՝ ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

(…)

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: (…)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություններ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

13. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը փաստելով, որ Գարեգին Բ Ներսիսյանին (Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց) մեղսագրվող արարքի փաստական

նկարագրությունը վերագրվող արարքի կատարման ենթադրյալ վայրի վերաբերյալ որևէ տվյալ չի պարունակում, գտել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում գտնվում է մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

Անդրադառնալով պաշտպանական կողմի այն հայտարարությանը, որ իրենք չեն վիճարկում այն հանգամանքը, որ Գարեգին Բ Ներսիսյանը (Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց) ******* ********** **********-ին կարգալույծ հռչակելու վերաբերյալ թիվ 77 Հայրապետական Տնօրինությունն արձակել է քաղաք Վաղարշապատում, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նշել է, որ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի որոշումներով արձանագրվել է, որ բանավոր հայտնած տեղեկատվությունը բավարար չէ հիմնավորելու, որ վարույթն ընդդատյա է որևէ դատարանին:

Միաժամանակ, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, անդրադառնալով հանրային մեղադրողի այն պնդմանը, որ հանրահայտ փաստի առկայությամբ պայմանավորված չի նշվել, թե վերագրվող ենթադրյալ արարքը որտեղ է կատարվել, գտել է, որ նույնիսկ այդպիսի հիմնավորման ընդունման դեպքում, քրեական հետապնդման մարմիններն ազատված չեն մեղսագրվող արարքում նշելու ենթադրյալ արարքի կատարման վայրը, հետևաբար դատարանը իրավասու չէ գնահատելու արդյոք որևէ փաստի հաստատման կամ հերքման համար առկա է հանրահայտ փաստ, թե ոչ:

Բացի այդ, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նշել է, որ եթե անգամ ընդունելի համարվի, որ հանրահայտ փաստ է, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսության նստավայրը գտնվում է քաղաք Վաղարշապատում, միևնույն է, ընդունելի չէ այն պնդումը, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր բոլոր տնօրինություններն արձակում է քաղաք Վաղարշապատում[9]:

[9] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը փաստել է, որ թեև Գարեգին Բ Ներսիսյանին մեղսագրվող արարքի փաստական նկարագրության մեջ հստակ նշված չէ ենթադրյալ արարքի կատարման վայրը, այնուամենայնիվ նույն քրեական գործի շրջանակներում Նաթան Սամուել Օհանիսյանի, Հայկազուն-Վրեժ Անդրանիկի Նաջարյանի, Վահան Սարգսի Հովհաննէսեանի, Էդգար Գրիգորի Հակոբյանի, Նելսոն Ռազմիկի Բաբայանի և Արթուր Սամսոնի Հակոբյանի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդման որոշումների մեջ հստակ ձևակերպված է, որ ******* ********** **********-ը կարգալույծ է հռչակվել 2026 թվականի հունվարի 27-ին՝ Մայր Աթոռում տեղի ունեցած Գերագույն հոգևոր խորհրդի նիստի ընթացքում:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, անդրադառնալով Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից մեջբերված Վճռաբեկ դատարանի որոշումներին, արձանագրել է, որ դրանք առավելապես վերաբերում են մեղադրյալի կողմից արված հայտարարությանը և այն դեպքերին, երբ բացի բանավոր հայտարարությունից այլ փաստական տվյալներ առկա չեն, իսկ սույն դեպքում, բացի բանավոր հայտարարությունից, առկա են նաև այլ փաստական տվյալներ, որոնք վկայում են տարածքային ընդդատության կանոնի պահպանված լինելու մասին[10]:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ Գարեգին Բ Ներսիսյանին (Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց), Նաթան Սամուել Օհանիսյանին (Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյան), Հայկազուն-Վրեժ Անդրանիկի Նաջարյանին (Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյան), Վահան Սարգիսի Հովհաննէսեանին (Վահան եպիսկոպոս Հովհաննիսյան), Արթուր Սամսոնի Հակոբյանին (Հովնան եպիսկոպոս Հակոբյան), Էդգար Գրիգորի Հակոբյանին (Մակար եպիսկոպոս Հակոբյան) և Նելսոն Ռազմիկի Բաբայանին (Մուշեղ եպիսկոպոս Բաբայան) մեղադրանք է ներկայացվել այն բանի

[10] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

համար, որ վերջիններս ենթադրաբար խոչընդոտել են օրինական ուժի մեջ մտած դատական այլ ակտի՝ «Հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարելու» վերաբերյալ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշման կատարմանը, որը դրսևորվել է ****** ********* **********-ին (**. ****** ********* *********) կարգալույծ հռչակելով:

Վերոգրյալի առնչությամբ հարկ է արձանագրել, որ Նաթան Սամուել Օհանիսյանին, Հայկազուն-Վրեժ Անդրանիկի Նաջարյանին, Վահան Սարգիսի Հովհաննէսեանին, Արթուր Սամսոնի Հակոբյանին, Էդգար Գրիգորի Հակոբյանին և Նելսոն Ռազմիկին ներկայացված մեղադրանքներում հստակ արձանագրվել է, որ վերջիններիս կողմից մեղադրանքի փաստական հիմքը կազմող վերոնշյալ գործողությունները կատարվել են **Մայր Աթոռում տեղի ունեցած Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստի ընթացքում**: Ինչ վերաբերում է Գարեգին Բ Ներսիսյանին (Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց) ներկայացված մեղադրանքին, ապա դրա նկարագրությունից պարզ է դառնում, որ վերջինիս կողմից ******* ********** **********-ին կարգալույծ հռչակելը հաջորդել է Գերագույն Հոգևոր Խորհրդի կողմից այդպիսի առաջարկ ներկայացնելուն: Նման պայմաններում, Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ միայն Գարեգին Բ Ներսիսյանին (Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց) ներկայացված մեղադրանքում համանման ձևակերպման բացակայությունն ինքնին չի կարող մեկնաբանվել այնպես, որ մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել ենթադրյալ արարքի կատարման վայրը: Ընդհակառակը, մեղադրյալներին ներկայացված մեղադրանքների նկարագրությունից ակնհայտ է, որ ենթադրյալ արարքը կատարվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում (հաշվի առնելով նաև անվիճարկելի այն հանգամանքը, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգևոր և վարչական կենտրոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն է), որպիսի հանգամանքը չեն վիճարկել նաև կողմերը:

Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատն իր անհամաձայնությունն է հայտնում Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր

իրավասության դատարանի հետևություններին և արձանագրում, որ սույն դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կանոնը կիրառելի չէ՝ դրանում նախատեսված պայմանների բացակայության պատճառաբանությամբ:

15. Ինչ վերաբերում է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վկայակոչած՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի կողմից վարույթի ընդդատության հարցի լուծման շրջանակներում արտահայտված իրավական դիրքորոշումներին, ապա հարկ է նշել, որ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից ընդունելի չի համարվել վարույթի ընդդատության հարցի քննության ընթացքում անձի կողմից հայտնած նոր փաստական տվյալների հիման վրա վարույթի ընդդատությունը որոշելը: Մինչդեռ սույն դեպքում պաշտպանական կողմն ընդամենն իր դիրքորոշումն է արտահայտել վարույթի ընդդատության առնչությամբ:

16. Վերոգրյալը հիմք է տալիս փաստելու, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելով, դրսևորել է բացառապես սուբյեկտիվ և ձևական մոտեցում՝ առանց օբյեկտիվ նախադրյալների նախաձեռնելով ընդդատության վեճ ու անհարկի դատական շրջապտույտ, դրանով իսկ առաջացնելով ՀՀ Սահմանադրությամբ ու Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված՝ ողջամիտ ժամկետում գործի քննության և դրանից ածանցվող իրավունքների խախտման վտանգ:

17. Ամփոփելով, Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԱՐԴ/0444/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, իրավաչափ չէ:

18. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԱՐԴ/0444/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Գարեգին Բ Ներսիսյանի (Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց), Նաթան Սամուել Օհանիսյանի (Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի), Հայկազուն-Վրեժ Անդրանիկի Նաջարյանի (Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանի), Վահան Սարգիսի Հովհաննէսեանի (Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանի), Արթուր Սամսոնի Հակոբյանի (Հովնան եպիսկոպոս Հակոբյանի), Էդգար Գրիգորի Հակոբյանի (Մակար եպիսկոպոս Հակոբյանի) և Նելսոն Ռազմիկի Բաբայանի (Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի) վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 507-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ ԱՐԴ/0444/01/26 քրեական վարույթն ընդդատյա է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ